«Հայաստանի Հանրապետություն», 10 օգոստ. 199



## Բարեկամությունը՝ նորովի

Անկախության երջանկությունը դեռ չվայելած՝ պատերազմը չողեց մեր դուռն, եւ թշնամական երկրների օղակներում մեն-մի ճանապարհ մնաց հույսի՝ դեպի Իրան տանող ճանապարհը:

Եւ, սակայն, այդ էլ դժվար էր տրվում. չափից դուրս շատ էին երկաթե օղակում մեզ խեղդել կամեցողները: Ու երկու երկրների բարձր ղեկավարության հաստատուն դիրքորոշումը, թերեւս, այն ամուր հիմքը եղավ, որպեսզի վերստին հանգուցվեն վաղնջական բարեկամության երկու ծայրերը, վերստին ամրանան ու դառնան անքակտելի:

Յոթ փականքով փակ սահմանաբաժան գիծը փոխարինվեց Մեղրու կամրջով, ու դրանից հետո այդ ճանապարհը Հայաստան բերեց ու Իրան տարավ ոչ միայն առեւտրականներին ու գործարարներին, այլ նաեւ մարզիկներին, գիտության մարդկանց, գրականագետներին, մշակույթի գործիչներին:

Այսօր հերթական անգամ Հայաստան են ժամանել իրանցի ու իրանահայ գործիչներ եւ գրողներ, որոնց մի մասի հետ ջերմ հանդիպում կայացավ Հայաստանի գրողների միության տանը:

Միության վարչության նախագահ Հրանտ Մաթեւոսյանը մայրաքաղաքի լրագրողներին ներկայացրեց Թեհրանից ժամանած հյուրերին՝ էդիկ Բաղդասարյանին (Գերմանիկ), էդիկ Մեհրաբյանին, Հրաչ Ստեփանյանին, Սիմոն Խաչատրյանին եւ Ռուբեն Ավագյանին, որոնք հայտնի անուն են ոչ միայն պարսկահայ համայնքում, այլեւ Իրանի Իսլամական Հանրապետության գրական, հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում: Նրանք տասնյակ մեծածավալ ու արժեքավոր գիտական աշխատությունների, մենագրությունների, ժուռնալային հոդվածների եւ հետազոտությունների ու հայերենագործությունների հեղինակ են եւ իրենց մոտ ամեն կերպ նպաստում են հարեւան երկու երկրների մերձեցմանն ու բարեկամության նորացմանը:

-Մենք սպասում ենք հանդիպման նաեւ մեր պարսիկ գրչեղբայրների հետ,-ասաց գրողների միության քարտուղար Աբգար Ափինյանը: -Իսկ դրանց անպայմանորեն կհաջորդեն փոխայցելությունները մեր կողմից:

Տ. ԹՈՆԴԻԼՅԱՆ

## «Ոսկե սկավառակը» հայ գիտնականին

20-րդ դարի ամենահեղինակավոր պարգեւներից մեկին՝ «Ոսկե սկավառակի» է արժանացել բժիշկ գիտնական, պրոֆեսոր Լեւոն Մկրտչյանը: Ամերիկյան կենսագրական ինստիտուտի գործադիր փոխնախագահի Ջ. էվանսի նամակում ասված է, որ այդ պարգեւը հայ գիտնականին է շնորհվել մարդու բարօրության գործում նրա բերած խոշոր նվաճումների համար:

«Ոսկե սկավառակի» հանձնումը տեղի ունեցավ օգոստոսի 9-ին Երեւանում, ամերիկյան դեսպանատանը: Ելույթ ունենալով արարողությանը, Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Պիթեր Թոմսենն ասաց, որ իր համար մեծ պատիվ է հայ բժշկին հանձնել մի պարգեւ, որին քչերն են արժանացել աշխարհում: Հայաստանը կարող է հպարտանալ նման մարդկանցով:

ավանդը հայրենական եւ համաշխարհային բժշկության մեջ:

Շուրջ 20 տարի է, ինչ պրոֆեսոր Լեւոն Մկրտչյանը գլխավորում է Հայաստանի առողջապահության նախարարության ուռուցքաբանության գիտական կենտրոնը: Նրա բազմաթիվ հետազոտություններ նվիրված են ուռուցքային հիվանդությունների աճի կանխմանը, նոր հակաուռուցքային արդյունավետ դեղամիջոցների ստեղծմանը: Գիտնականի ղեկավարության ներքո, մասնավորապես, ստեղծվել է սաղմնային հակաուռուցքային պատվաստանյութ, որը, ինչպես ցույց տվեցին փորձարկումները, ավելի քան 40 տոկոսի դեպքում (երբ քաղցկեղով հիվանդանալու հավանականությունը 100 տոկոս է) լիովին կանխում է չարորակ ուռուցքների առաջացումը: ԱՄՆ-ի Մասաչուսեթսի համալսարանում հաջողությամբ է ընթանում Հայաստանի ուռուցքաբանության կենտրոնում ստացված բնական հակաուռուցքային պատրաստուկի փորձարկումը, որը ճնշում է քաղցկեղային հիվանդությունների որոշ ձեւերի զարգացումը: Ի տարբերություն լայնորեն կիրառվող միջոցների, պատրաստուկը զերծ է օրգանիզմի վրա հարակից թունավոր ներգործությունից:

*Արմենպրես*

*Մարզական*

## Տանը՝ հաղթանակ

Աբովյանի «Կոտայքի» (ավագ մարզիչ՝ Ս. Պետրոսյան) ֆուտբոլիստները միջազգային մրցասպարեզում իրենց պատմական նորամուտը նշանավորեցին հաղթանակով: «Հրազդան» կենտրոնական մարզադաշտում կայացած Եվրոպայի գավաթակիրների գավաթի խաղարկության նախնական փուլի առաջին մրցախաղում մեր ֆուտբոլիստները հյուրընկալել էին 2 տարի առաջ ԷՊԱ եւ «Պեզոպորիկոս» թիմերի միավորումից ստեղծված Լառնակայի ԱԷԿ-ին (Կիպրոս), որը «Կոտայքի» նման իր երկրի գավաթի խաղարկության եզրափակչի մասնակից էր եւ առաջնությունում գրավել էր 4-րդ տեղը: Աբովյանցի ֆուտբոլիստները, որոնք օբյեկտիվ պատճառներով (մեզ մոտ միայն նոր է մեկնարկել երկրի առաջնությունը) դեռեւս հեռու էին իրենց լավագույն մարզավիճակից. ողջ խաղի ընթացքում աչքի ընկան գավաթային ուժեղ թիմին վայել մարտունակությամբ: Նրանք ցուցաբերելով կամային բարձր հատկանիշներ, համառորեն փնտրում էին ԱԷԿ-ի դարպասը գրավելու բանալին: «Կոտայքի» գործողություններում ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում, երբեմն նրա գրոհները հախուռն ու անկազմակերպ էին ստացվում, քիչ էին առանց գնդակի տեղաշարժերը: «Կոտայքն» ուժեղացնելու նպատակով «Արարատից» այստեղ տեղափոխված Ս. Արզումանյանի արդյունավետ ջանքերի շնորհիվ 2-րդ կեսում աբովյանցիների խաղն ակտիվացավ: Ի վերջո, խաղավարտից 8 րոպե առաջ նրանց համառությունը պսակվեց հաջողությամբ: Հենց Արզումանյանի օգնությամբ էլ ձեռնարկված կոմբինացիան դիպուկ հարվածով եզրափակեց Հ. Բերբերյանը, բաց անելով եվրագավաթների խաղարկությունում «Կոտայքի» խփած գոլերի հաշիվը: Տանը՝ 1:0 հաշվով հաղթեց «Կոտայքը», սակայն կբավարարի արդյոք դա հաջորդ փուլ դուրս գալու համար. ցույց կտա 2 շաբաթ հետո՝ օգոստոսի 22-ին Կիպրոսում կայանալիք պատասխան մրցախաղը: Հարկավոր է ամենայն լրջությամբ նախապատրաստվել, քանզի, ինչպես